



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԻՆԱՐԱՐԸ

Աստվածաշնչային Հովհաննես անունը տարածված է մահ Տավուշ աշխարհում և գալիս է դարերի խորքից: Հավանաբար, ի հիշատակ մախորդ արժանավորների բարի գործերի, նրանց անուններով են կոչել մոր ծնվածներին, որպեսզի սրանք ևս շարունակեն նրանց աշխարհաշեն ավանդույթները: Այս անվանակոչությունը շարունակվում է մինչև մեր օրերը: Տավուշի պատմությանը հայտնի են Հովհաննես Խմաստասերի, Հովհաննես Վանական Տավուշեցու, սրա աշակերտ Հովհաննես Տավուշեցու և այլոց անունները: Այս անունն է կրել մահ մի այլ Հովհաննես, որն ապրել է նրանցից մի քանի դար հետո:

Երկար որոնումներս ու մտորումներս համոզեցին, որ այս տավուշցի Հովհաննեսը թեև բարձրաստիճան հոգևորական է եղել, բայց կարելի է Ծինարար կոչել, որովհետև, ինչպես հետո կտեսնենք, իրոք, մա շինարարական խոշոր աշխատանքներ է կատարել: Կառուցել է եկեղեցիներ, որոնց շուրջն են հավաքվել արհավիրքներից ապաստան որոնող տնավեր դարձած մարդիկ: Այս Հովհաննեսը հիմնադրել է բնակավայրեր, որոնք հետո դարձել են Չորաթան, Վերին Կարմիրաղբյուր և Բերդ գյուղերի ներկա սերընդի մախնիներից տուն կանչող, իր շուրջը համախմբող զանգերի դռնակներ:

Սակայն այս Հովհաննեսի մասին կենսագրական ստույգ տեղեկությունները շատ քիչ են: Եվ այն էլ միայն վկայում են իր կառուցած եկեղեցիների վրայի վիմագիր արձանագրությունները:

Վիեննայի Մխիթարյան միաբանության անխոնջ մշակներից մեկը՝ դոկտոր Համագասպ Ոսկյանը, իր «Արցախի վանքերը» (Վիեննա, 1953, 256 էջ) աշխատության մեջ, խոսելով Խորանաշատ վանքի մասին, նշում է, թե ո՛ր թվականներին ի՛նչ գրքեր են գրվել այդտեղ և Տավուշ երկրում, ովքե՛ր են եղել գրիչները, ո՛ր արքեպիսկոպոսի տնօրինության ժամանակ են աշխատել նրանք:

Հ. Ոսկյանը գրում է, որ սկսած 13-րդ դարի վերջից հիշատակությունը լուում է Խորանաշատի մասին. «Սակայն անիկա ժամանակին հորձանքին դեմ ոգևորելով իր գոյությունը պահած է և զարգանալով նույնիսկ եպիսկո-

նակում Հին Շենից այլ վայրերում սպորողները հավաքվեցին այս եկեղեցու շուրջ:

Այսպես զանգ են կախել նաև ներկա Չինչին գյուղի նախկին բնակիչները, երբ 1877 թ. Թովուզ գյուղից մի քանի ընտանիք ամուսնը իրենց անասունները ամառանոց համարվող վայրից չեն իջեցրել և մնացել են այդտեղ՝ Չինչինում: Դա գտնվում է Կապտավանքից արևելք մի սարահարթում: Թովուզցիները որքան ջանում են նրանց ետ բերել, չի հաջողվում: Նրանց սահմանային-հողային վեճը հասնում է մինչև 1930-ական թվականները, որը վերջնականապես հարթեցվում է իրենց հայրենակից, գրող Մաթևոս Դարբինյանի ջանքերով: Այս մասին նյութեր են պահպանվում նրա անձնական արխիվում՝ Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում:

Չինչիցիները որպեսզի համոզեն իրենց հարազատներին, համագյուղացիներին, որ իրենք առանձին չեն են, գյուղի կենտրոնում տնկում են մի սյուն և զանգ կախում: Քահանան գալիս էր Թովուզ գյուղից: Դա եղել է 1877 թ., որը և համարվում է այդ գյուղի հիմնադրման տարին¹: Հետագայում սրանք ևս վերականգնել են ավերակ եկեղեցին և համարվել ու ճանաչվել որպես առանձին գյուղ:

Ահա թե որքան կարևոր է եղել գյուղում եկեղեցի ունենալը: Հետևապես, առավել քան հարգանքի ու մեծարանքի է արժանի Հովհաննեսը՝ Խորանաշատի եպիսկոպոսը, որին մենք Շինարար կոչեցինք, իր նախորդներից զանազանելու նպատակով:

Ինչպես «Արձագանք» հանդեսում², այնպես էլ Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում (Բաքու, 1895, էջ 328) հիշատակվում է, որ Չորաթանի եկեղեցին կառուցվել է Հայոց ՌՃԼԱ (1682) թվականին, որը արձանագրված է շենքի պատի վրա՝ հիշատակելով նաև կառուցողի անունը: Եվ իրոք, տողերիս հեղինակը տեսել և դրանք արտագրել է. «Թվ. ՌՃԼԱ յանուն Աստծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ մեղապարտ Ովանէս եպիսկոպոս Խորանաշատու»: Մի այլ արձանագրություն. «Սուրբ խաչս բարեխաւս Ովանէս եպիսկոպոսի աշակերտ Տէր-Դարթին»: Ինչպես տեսնում ենք, առաջին արձանագրությունը վկայում է, որ եկեղեցին Խորանաշատու Հովհաննէս եպիսկոպոսի ձեռքով է շինվել, իսկ երկրորդը ցույց է տալիս, որ Շինարար Հովհաննէսը ունեցել է իր երախտապարտ աշակերտները:

Շատ մեծ բարեբախտություն է Չորաթան գյուղի համար, որ այն ժամանակի անարդար պահանջներին զոհ չի գնացել եկեղեցին և օգտագործվել է որպես կոլտնտեսության պահեստ: Առիթն օգտագործելով պետք է շնորհակալություն հայտնել 1930-ական թվականների այդ գյուղի ղեկավարներին, որոնք խորհրդային իշխանության տարիներին վանդալիզմից փրկել են իրենց նախնիների թողած հոգևոր այդ արժեքը՝ եկեղեցին:

Ափսոսելով, որ Խորանաշատու այս Հովհաննէսի մասին կենսագրական մանրամասներ չեն պահպանվել, կամ եթե պահպանվել են, առայժմ անհայտ են մեզ: Մենք մխիթարվենք այն պարզ ճշմարտությամբ, որ մարդ-

¹ Այսպես էր վկայում տիկնոջս հորական տատը՝ Վարվառա Գրիգորի Գաբրիելյան-Դարբինյանը, ծնված 1867 թվին: Պատմել է 1957 թվականին Թովուզ գյուղում: Ինքը Չինչինի Գաբրիելյանների աղջիկ էր, Դարբինյանների հարս:

² Քաջիկյան, Ճանապարհորդական հիշատակարան: —Արձագանք (Թիֆլիս), 1888, № 7, էջ 86—90:

կանց մասին խոսում են նրանց գործերը, թողած հոգևոր և նյութական արժեքները:

«Արձագանքի» հոդվածագիր Քաջիկյանը, խոսելով Վերին Կարմիրաղբյուրի առիթով Հովհաննես Ծինարարի մասին, գրում է. «Կարմիր Աղբյուր, Վերին՝ առաջինից (Նորաշեն գյուղից) 2 վ., Տասը տարի հազիվ կա, որ սորա բնակիչները Ներքին Կարմիրաղբյուրից. բաժանվել եկել են այստեղ և մինչև այսօր էլ վերջին ժողովրդոց հետ կազմում են մի հասարակություն, բայց որ այստեղ և հառաջագույն հայեր են բնակվել, ցույց է տալիս եկեղեցին, որ շատ հստաջ շինված է, և որքան դուռն անկատի կիսատեղծ արձանագրությունից կարելի է լինում հասկանալ, դարձյալ Խորանաշատի Հովհաննես եպիսկոպոսի ձեռքով, որը շինել է Չորաթանի եկեղեցին: Բնակիչներն են թվով 24 տուն, ունին մի դպրոցական շենք բավականին հարմար, որ սովորում էին երեխաները մինչև փակվիլը»: Հոդվածը գրել է 1885 թ. ամռանը: Ինչպես նկատում ենք, այն տպագրվել է երեք տարի հետո³:

Գյուղը հիմնադրվել է 1860 թվին: 100-ամյակի տոնակատարությունը եղել է 1960 թ. և այս առիթով գյուղի կենտրոնում կառուցվել է աղբյուր-հուշարձան: Սակայն այն որպես գյուղատեղի հիշատակվում է ավելի հին ժամանակներից: Մենք կարծում ենք, որ մեր օրերի նման ծանր ժամանակներում գյուղացիները հեռանալով դարձյալ տարիներ հետո վերադարձել ու շենացրել են իրենց գյուղը և վերականգնել եկեղեցին:

Դժբախտաբար վերը հիշատակված արձանագրությունները լրիվ չեն պահպանվել: Քանի որ եկեղեցին 1931 թվին մի քանի վայ կոմունիստների ջանքերով քանդվել է և նրա քարերով պատվել գյուղի համար մի ակումբի շենք, իսկ մնացածով պատել են այն ժամանակվա գյուղի ղեկավարներ համարված Արշակ Մեսրոպյանի և Մաթևոս Առաքելյանի բնակարանները: Համանուն գյուղացի Աշոտ Օհանյանը (ծնվ. 1920 թ.) պատմում էր, որ, երբ եկեղեցին քանդում էին, գյուղի քահանա Տեր Համբարձում Ալավերդու Պողոսյանը (քահանա է ձեռնադրվել 1888 թվին) լաց լինելով աղաչում էր, որ եկեղեցին չքանդեն, այլ շինությունը օգտագործեն որպես պահեստ կամ մի այլ բան: Բայց քահանային լսող չկար:

1971 թ. ամռանը հայրենի գյուղում՝ Վերին Կարմիրաղբյուրում, Աքսորիկ Մելյանը հին ակումբի շենքի արևմտյան պատի 2-րդ հարկի պատուհանի մոտ դրված մի քարի վրա ցույց տվեց մի քանի տառ: Քարի վրայի սվաղը մաքրելուց հետո, պարզ ու հստակ կարդացվեց.

ԿԱՐՄԻՐ ԱՂԲԻՐ ՂԶԼԲՈՒԼԱՂ
ԲՆԱԿԻԶՔ ԲՆԻԿ ՀՕՂՆ ԱՐՔՈՒՆԻ
ԵՍ ՏՐ ՎԱՐԴԱՆՍ ԾԻՆԵՑԻ ԵԿԵ-
ՂԵՑԻՍ ՉԵՌԱՄԲ ՄՈՒՐԱՏԽԱՆԻ
ՄԲ ԽԶՍ. ԲԱՐԽՍԻ ԽԱՆԱՂԻՆ:

Դա շեկավուն քար է, ինչպես ասում է ժողովուրդը, Տերունական ամրոցի մոտի քարհանքից բերված 52×26 սմ մեծությամբ: 1986 թ. ամռանը գյուղի գրասենյակն ու ակումբի շենքը քանդել են և այդ արձանագրությամբ քարը պահվում է գյուղի թանգարանում: Ի դեպ ասեմ, որ թանգարանը

³ Քաջիկյան, Ծանապարհորդական հիշատակարան: — Արձագանք, 1888, № 7, էջ 88:

հիմնադրվել է 1960 թ. դպրոցի պատմության ուսուցիչ Սերոժ Մխիթարյանի ջանքերով և կարող է պատիվ բերել մի մեծ քաղաքի, այնքան շատ են ցուցանմունքները: Հետաքրքրական են նաև նյութերի բազմազանությամբ: Գրանցվել է նաև արձանագրության մի բեկոր, որի վրայի տառերը վերծանել հնարավոր եղավ, թեև երկար ժամանակ եղել էր շենքի հիմքում և խիստ մաշվել:

Այս վիմագիր քարերը պահպանելու համար շնորհակալության արժանի են այն ժամանակի որմնադիրներ Հակոբ Մարգարյանը, Նիկալ Մելյանը, Սողոմոն Ավագյանը, Եգոր Ծատուրյանը, Շեկո Գիժլարյանը և ուրիշներ: Նրանք այս քարերը կորստից փրկելու համար թաքցրել են ժամանակի ղեկավարներից, որոնք կարող էին ջարդել տալ:

Այսուհանդերձ Քաջիկյանի հոդվածում և Մ. Բարխուդարյանի «Արցախ» գրքում գրված է. «Ես տեր Վարդանա շինեցի գեկեղեցիս ձեռամբ Մուրադխանի թվ .ՌԾԾ.»։ Մի այլ քարի վրա. «Սուրբ խաչս Խանադին»։ «Ովանես եպիսկոպոս շինեցի գեկեղեցիս ձեռամբ տեր Գրիգորին»⁴: Գյուղի քահանան եղել է Տեր-Կարապետ Մխիթարյանը:

Վերը հիշատակված արձանագրությունը վկայում է, որ Վերին Կարմիրաղբյուր գյուղի եկեղեցին կառուցվել է 1701 թվականին, նույն Խորանաշատու Հովհաննես եպիսկոպոսի ձեռքով: Վերը հիշատակված վիմագիր քարի բեկորի վրայի թվերն էլ ցույց են տալիս, որ այդ նախկինում կառուցվել է դրանից ուղիղ մեկ դար առաջ: Այս բոլորը զարմանալի չեն, քանի որ հայը կառուցել է, իսկ թշնամիները՝ կործանել: Եկեղեցու գավթում թաղված Հակոբ Մելյանի շիրմաքարի արձանագրությունից իմացվում է, որ այն վերանորոգվել է երրորդ անգամ:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԾԵՐՈՒՆՈՅՆ ՅԱԿՈՎԲԱ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ ՄԵԼԵՆՑ
ԶԻ ԷՐ ԲԱՐԵԱՅ ՊԱՏՃԱՌ ԵՎ ՉԱՐԵԱՅ ՀԵՌԻ, ՀԻՄՆԱԴԻՐ ԳՅՈՒՂԻՍ
ԵՎ ՆՈՐՈԳՈՂ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ԵՐԶԱՆԻԿ Ի ՄԵԶ ՄԱՐԴԿԱՆՑ
ԿԱՐՈՏՈՒԹՅԱՄԲ

ԵՎ ՈՐԴՈՔ 81 ԱՄԱՅ ԲԱՐՈՔ ԾԵՐՈՒԹՅԱՄԲ ՎԱԽԾԱՆՎԵՑ 1884 Թ.
ՀՈՒՆՎԱՐԻ 19-ԻՆ:

Եկեղեցին քանդելուց հետո Արշակ Մեսրոպյանը այդ շինության քարով գերեզմանի հարևանությամբ կառուցել էր իր բնակարանը: Այս պատճառով շիրիմները ընկել էին ոտնատակ, և 1968 թ. Մելյանները և Տեր Կարապետի ազգակիցները գերեզմանները տեղափոխեցին Յալի և Քարհանքի գերեզմանոցները: Ազատված տեղը եկեղեցու տարածքի հետ միասին սկսեցին օգտագործել տանտերերը:

Բերդ գյուղի եկեղեցին նույնպես կառուցվել է Խորանաշատու Հովհաննեսի նախաձեռնությամբ: Քաջիկյանը գրում է. «Բերդ տաճկերեն Թովուզ դալայ՝ առաջինից 5 վ. (Թովուզ գյուղից): Այս անունն առել է յուր հարավկողմը շինված ամրոցից, որի այժմ ավերակները կան: Բնակիչներն են 77 տուն, որոնք հավաքվել են այստեղ գաղազան տեղերից և մինչև անգամ Երևանի նահանգից: Եկեղեցին՝ քարաշեն է և շինված Թիֆլիզեցի չիթախենց մահտեսի Սորլիսի ծախքով և Խորանաշատու Հովհաննես եպիսկո-

⁴ Բարխուդարյան Մ., Արցախ, Բաքու, 1895, էջ 329:

ցին այդտեղից: Երկար ժամանակ ընկած էին գրասենյակի առաջ: Ազատ պահերին գյուղի երիտասարդները օգտագործում էին որպես ծանրաքարեր: Դրանցից մեծը եկեղեցուն էր նվիրել Վարդևան Ղափալյան-Մարգարյանը, իսկ փոքրը՝ եկեղեցին վերակառուցել տվող Հակոբ Տեր-Մովսեսի Մելյանը: Երկու զանգերի վրա կային ձուլարանային արձանագրություններ այս մասին: Պետք է միայն այսօր ափսոսալ, որ դրանք ոչ մի մարդ չի արձանագրել ու պահպանել: Այս զանգերը տարան ադրբեջանական Թովուզ երկաթուղային կայարան, որ այնտեղից ուղարկեն ռազմական գործարան գեներալատորելու նպատակով: Տավուշի մյուս գյուղերի եկեղեցիներն էլ նման նակատագրեր են ունեցել:

Այսուհանդերձ, այդ աշխարհի հայտնի վանքերից և գյուղերում գոյատևող ոչ մի եկեղեցի գործող չէ: Ժամանակն է մտածել այս տասին: Թեև առանձին անհատներ հանգանակություն են կատարում քանդված եկեղեցիների փոխարեն կառուցելու նորերը, բայց նրանց հավաքած չնչին գումարները չեն կարող հոգալ այդ բոլորի մասին: Հետևապես պետք է պետական մոտեցում հանդես բերել, կամ գտնվի մի նոր Հովհաննես եպիսկոպոս Ծինարար, կամ Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյան (Թովուզ գյուղ 1836—1903), որոնց ջանքերով եկեղեցիներ են վերակառուցվել ու շինվել: Նշենք, որ Թովուզ գյուղի եկեղեցին պահպանվել է և օգնագործվել որպես կոլտնտեսության հացահատիկի պահեստ: Միայն գմբեթն է քանդվել, որի վերականգնումը դժվարության հետ կապված չէ: Կարծում ենք, այս եկեղեցին կարելի է գործող դարձնել...

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Խորանաշատու Հովհաննես Ծինարար եպիսկոպոսը Խորանաշատ վանքի աթոռակալ է եղել 1680—1710-ական թվականներին, ծավալել բուռն գրչագրական ու շինարարական գործունեություն, որը պետք է միայն բարի նախանձով հիշել: Եվ ցավ չէ, որ չգիտենք, թե նա ո՞ր գյուղում և ե՞րբ է ծնվել ու մահացել: Հետևապես նա արժանի է, որ տեղ գրավի Տավուշ աշխարհի երանելիների շարքում, մարդիկ, որոնք պետականություն չունենալով հանդերձ, շենացրել են մեր լեռնաշխարհի այդ տարածքը՝ վեր հանելով ավերակների մոխիրներից, նրանով իսկ միշտ բնակեցված պահելով Տավուշը, փառք բերելով ոչ միայն իրենց, այլև մեզ, մեր ժամանակակիցներին, որոնք այսօր երեք կողմից շրջափակված, շուրջ երկու հարյուր կմ տարածքը անձնագոհաբար պաշտպանում են հակառակորդի ոտնձգություններից՝ տալով նաև ծանր զոհեր: Դա մի փոքր Արցախ է՝ շրջափակված լեռների, կիրճերի ու անտառների տեջ:

Այսօր էլ Հովհաննես Ծինարարը, իր շինություններով հանդերձ, իր ապագա սերունդների հետ միասին դեմառդեմ կանգնած է թուրքին: Հետևապես նա արժանի է մեծարանքի... Եվ պետք է խոնարհվել նրա անհայտ ու սուրբ շիրմի առջև...⁷:

ԲԱԼԱՔԵԿ ՄԵԼՅԱՆ

⁷ «Հովհաննես Ծինարար» վերնագրով հոդված ենք գրել. «Այգաբաց» (Բերդ), 1976, 7 հոկտեմբեր, № 119: